

ՀԱՐԱՒԱՄԵՐԻԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Նոյեմբերի շաբաթավերջը՝ առիթ էր հաշվառելի հարաւամբերիկեան գաղութները «մտածելի» իրենց մասին: Այս յատկանշական խօսքը, զոր նիստերէն մէկուն ընթացքին յայտնեց Պուէնոս Այրէսի «Ռոքա» թանգարանի Գաղթականութեան Հետազոտական Հիմնարկի տնօրէնուհին, կրնայ լաւագոյնս բնորոշել Հարաւային Ամերիկայի հայ համայնքներու ուսումնասիրման նուիրուած առաջին գիտաժողովը, որ տեղի ունեցաւ Պուէնոս Այրէսի մէջ Հայագիտական Ուսմանց Հիմնարկի կազմակերպութեամբ:

Հիմնարկի երիտասարդ անգամները իրենց վրայ վերցուցած էին զժողով առաջնութիւն մը՝ ի մի բերել տարբեր գաղութներու ուսումնասիրողներ, առիթ տալ միտքերու փոխանակման, փրկել վկայութիւններ ու պատմական եղելութիւններ, նկարագրել ու վերլուծել իմացական ազատ միջավայրի մէջ: Այս բոլորը ներկայ էր գիտաժողովին մէջ, որ արդարացի կազմակերպչինքնու ճիշդը եւ կոշտած է խոր հետք ձգելու զիտա-հետազոտական ոլորտին մէջ:

Հրաւերին պատասխանած էին 22 զեկուցողներ՝ Արժանթինէն, Պարագուայէն եւ Ուրուկուայէն: Դժբախտաբար, վերջին պահուն Ուրուկուայէն եկող երկու հետազոտողները՝ Դանիէլ Գարամանուկեան եւ Ալպերթո Տիւրէ-ճեան, չկրցան ներկայ գտնուիլ, երկրի նախագահական ընտրութիւններու հետ կապուած գործնական դժուարութիւններու պատճառով: Բացակայեցաւ նաեւ արժանթինցի միակ զեկուցողը՝ Գարինա Օրիսէ (Պահիա Պլանքա), անձնական պատճառներով:

Գիտաժողովին բացումը տեղի ունեցաւ ուրբաթ, 24 նոյեմբերին երեկոյան, ժամը Կեդրոն սրահին մէջ: Տեղի ունեցաւ կարճ յայտագիր մը, զոր վարչաց մարդաբան Սիլբիա Գըլլեան: Առաջին հերթին, Կազմակերպիչ Յաննախոյի անունով ելոյթ ունեցաւ քաղաքական գիտութիւններու թեկնածու Էտուարտո Գաբազըլեան, որ 1986-ին հիմնուած Հայագիտական Ուս. Հիմնարկի համառօտ պատմականը կատարեց, կանգ առնելով այս գիտաժողովի նպատակին վրայ, որ անցեալն ու ներկան կապելու միտքն է՝ ապա-

գալի հեռանկարներով: Այդ առումով, 60-ամեայ ժամը Կեդրոն սրահը խորհրդանշել էր արժանթինահայոց պատմութեան մէկ կարեւոր մասին. ահա թէ ինչու հոն կը կատարուէր բացումը:

Գիտաժողովը կը վայելէր ներքին Գործոց նախարարութեան կից Գաղթականութեան Տնօրէնութեան, «Ռոքա» թանգարանի Գաղթականութեան Հետազոտական Հիմնարկին, Ասիոյ եւ Աֆրիկէի Ուսմանց Լատինամերիկեան Ընկերակցութեան արժանթինեան մասնաճիւղի եւ Հայց. Առաք. Եկեղեցւոյ Կեդր. Վարչութեան հովանավորութիւնը: Նամակով իր զօրակցութիւնը յայտնած էր Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի սփիւռքահայ համայնքներու պատմութեան եւ մշակոյթի բաժնի վարիչ Կարլեն Դաւաթեան:

Այնուհետեւ խօսք առաւ պատմաբան, փրոֆ. Նելսոն Պուլլոմբեան, որ իր գոհունակութիւնը յայտնելով այս ձեռնարկին համար, վեր առաւ գիտաժողովին կարեւորութիւնը իբր փորձ՝ հարաւամերիկահայութիւնը առաւել խորութեամբ ճանչնալու եւ ճանչցնելու յայտնաբերող ժողովուրդին եւ ակադեմիական շրջանակներուն:

Աւարտին, Վալդա Կաթըլեան օգնական Հիմնարկի երիտասարդ գործակիցներէն Արմէն Պեղազեանի (ողբերգականօրէն մահացած 1989-ի յունուարին) յիշատակը: Յետոյ մէկ առ մէկ ներկայացուց գիտաժողովի բոլոր զեկուցողները:

Վերջաւորութեան տեղի ունեցաւ հիւրասիրութիւն Եկեղեցւոյ Տիկնանց Կազմակերպութեան օժանդակութեամբ:

Շաբաթ, 25 նոյեմբերին տեղի ունեցան նիստերը: Հրատարակուած էր զեկուցումներու ամփոփումները պարփակող գրքոյկ մը, որմէ արդէն կարելի էր գուշակել նիւթերուն ալիադանութիւնն ու որակը, որ գիտաժողովին յաջողութեան գրաւականն էր:

Առաջին նիստը՝ «Գաղթը—Առաջին հայերը», սկսաւ առաւօտեան ժամը 10-ին, «Սան մարթին» մշակութային կեդրոնի շէնք սրահին մէջ, ուր ընթացաւ ամբողջ նստաշրջանը: Այստեղ պէտք է ընդգծել, որ այս կեդրոնը նման գիտաժողովներու փնտրուած ժամադրավայրն է Պուէնոս Այրէսի, եւ անոր ընտրութիւնը հաշտ էր Հիմնարկը առաջնորդող սկզբնական հետ՝ հաղորդակցութիւն հաստատել

* Գիտաժողովը տեղի է ունեցել 1989 թ. նոյեմբերի 24—26-ին:

ու-հայկական շրջանակներու հետ նիստին կը նախագահէր բանասէր Զաւեն Կենագեան:

Ներքին Պալատին գեկուցումը խորագրուած էր «Հայ գնորդներու բաժանումը Պուլէնոս Այրէսի մէջ 1917—1930 թուականներուն եւ հաստատումի իրենց սկզբունքները»: Պաշտօնական վաւերացումներու հիման վրայ, քննուեցաւ հայերու տեղաբաշխումը քաղաքին մէջ սկզբնական շրջանին եւ լուսարձակի տակ առնուեցան կառուցային եւ մշակութային այն ազգականներ, որոնք ներգործեցին այս ուղղութեամբ:

Հայագիտական տունակներ համախմբուած էին բանասէր Նաւսիւս Պիւնայեանի գեկուցումին մէջ՝ «Նոթեր» հայ համայնքներու նախապատմութեան համար: Ի միջի այլոց, սկանտինաւեան աղբիւր մը Կրիսթինա մէջ հայերու ներկայութեան մասին, Զրհեղեղէն ետք Փերուի վերաբնակեցումը Հայաստանէն եկողներով, Փերու բնակող երեւանցի խումբ Պաուլիսիա Խաղմէի հետ (XVIII դ.) կապուած վաւերացումներ, Կուսթենալայի միակ հայ ընտանիքը՝ Մատրասէն եկած, Փանամայի ջրանցքի շինարարութեան մասնակցած 14 հայերը եւ այլն:

Ընկերաբան Իւմա Աւենան-Արիա Տուվալ ներկայացուց իր ամուսնոյն՝ գնդ. էտուարտո Արիաս Տուվալի պատրաստած ուսումնասիրութիւնը հայազգի զօրավար Սանտը Ծնցի մասին: Ինչպէս յայտնի է, Ծնց եղած է 1848-ի հունգարական յեղափոխութեան հիմնական ղեկավարներէն մէկը. յետագային ապրած է Արժանթին մինչեւ իր մահը, դառնալով գինուորական վարժարանի հիմնադիրն ու առաջին տնօրէնը: Զեկուցումը կ'անդրադառնար ատանլարար Ծնցի կեանքի արժանիքներին:

Հոգեբույժ Ազատուի Թըլըմեան-Անկէրի գեկուցումը նուիրուած էր Ծնցի սպանութեան ունեցած ներգործութեան՝ վերապրողներուն եւ իրենց զաւակներուն ու յետնորդներուն վրայ, հոգեվերլուծական տեսանկիւնէ քննելով շարք մը երեւոյթներ: Այս նիւթին հետ սերտօրէն առնչուած էր նաեւ «Հայկական Վկայութիւն»-ի երկու Հետազոտութիւններ՝ ալիստանքային, խմբակի հաղորդումը. այս խումբը ձեռնարկած է Եղեռնէն վերապրողներու վկայութիւններու արձանագրութեան եւ ցարդ կատարած է 30 տեսակցութիւններ: Տեղեկագրութիւնը կատարեց Ն. Պուլղուրեան:

Կէսօրուան մօտ արարտեցաւ այս նիստը, որմէ ետք, ինչպէս եւ յաջորդ բոլոր նիստերուն, տեղի ունեցաւ հետաքրքրական բանավէճ մը մասնակցողներուն միջեւ:

Դադարէ մը ետք, սկսաւ երկրորդ նիստը՝ «Առաջին դպրոցները», զոր կը նախագահէր

Է. Գուրազլեան: Այս նիստը պատմական մեծ հետաքրքրութիւն ունէր, քանի որ արժանիքնաւոր դպրոցական ցանցը աւելի քան 60 տարուան հնութիւն ունի, եւ քիչ բան յայտնի է սկզբնական շրջանին մասին: Հիմնական բանաւոր վկայութիւններու հիման վրայ, մանկավարժ Մարի Ճօրեալեան-Միւնայեան, պատմութեան դասախօս Մարկարիա Ճեւիւեան եւ բանասէր Զաւեն Կենագեան յաջորդաբար ներկայացուցին «Պերիսոյի հայկական վարժարանը», «Պատարաս Թաղի Արուսեան վարժարանը» եւ «Խորմեան վարժարանը. սկզբնական շրջան» նիւթերը: Հին դպրոցներու ուսումնասիրութիւնը մեծ կարեւորութիւն ունի, քանի որ յաճախ անոնց շուրջն է, որ ծաղկած է հայկական համախմբումներու ազգային կեանքը իր տարբեր երեսներով:

Վ. Մատթէոսեան կը նախագահէր երրորդ նիստին՝ «Էնգու» եւ կրթութիւն: Առաջին հերթին, հայերէն լեզուով ելոյթ ունեցաւ մանկավարժ Պետրոս Լաւանճ՝ «Քասաթիւնի ազգեցութիւնները Արժանթինի մէջ խօսուած հայերէնի վրայ» նիւթով: Հոս բնակարանացան բառապաշարային, լեզուա-մտածողական, ոճական, քերականական եւ շարահիւսական ազգեցութիւններ զորս սպաններէն զործած է հայերէնի վրայ, ըլլալ զբաւոր թէ խօսակցական: Այնուհետեւ, էտուարտո Գարսալիսեան բաղդատական ուսումնասիրութիւն մը ներկայացուց Պուլէնոս Այրէսի հայկական դպրոցներու ուսումնական ծրագիրներուն մասին, որ կ'ընդգրկէր դասաւանդուող նիւթերը, դասագիրքերը, ուսուցչական կազմը, միջ-դպրոցական շփումները, եւ այլն: Վերջապէս, Կրոն. Պէտրիս Տիւնիզ (Սան Փաւլօ) խօսեցաւ Ման Փաւլոյի համալսարանի հայ ամպիոնը՝ նիւթին շուրջ (ան ներկայիս այդ ամպիոնին վարիչն է), անդրադառնալով պատմութեան, ուսումնական ծրագրին, դասախօսներուն, ուսանողութեան եւ կատարուած աշխատանքներուն: Կ'արժէ նշել, որ այդ ամպիոնը միակն էր իր տեսակին մէջ հարաւամերիկեան ամպիոններէն մինչեւ հիմնուած է 1962-ին:

Դադարէ մը ետք, Յակոբ Կիւլիսեանի նախագահութեամբ սկսաւ շորրորդ նիստը՝ «Միութեանական-կազմակերպական երեւոյթները: Առաջին հերթին ելոյթ ունեցաւ բանասէր Վարդան Մատթէոսեան, որուն նիւթն էր «Հայ Եկեղեցին Պուլէնոս Այրէսի մէջ (1912—1938)»:

պատմա-կազմակերպական ուրուագիծ: Ան քննեց Հայց. Եկեղեցւոյ եւ անոր կից գործող հոգաբարձութեան պատմութիւնն ու զօրութիւնը յիշեալ շրջանին, վեր հանելով եկեղեցի-իշխանութիւն-դպրոց դադափարախօսական եռանկիւնի դերը անոր մէջ: Ապա, Կրոն. Սօսի Ամիրալեան (Սան Փաւլօ) ներկայացուց

«Սան Փաւլոյի Հայ Աւետարանական Համայնք» աշխատութիւնը, գծելով համայնքի պատմութիւնը, ներկայ վիճակը և ապագայ հեռանկարները, նիստի վերջին ղեկուցարարներն էր լուսանկարիչ Յակոբ Բախմաճեանը, որուն նիւթն էր Թուրքիոյ նահանգի (Արժանթին) հայկական պղտիկ համայնքը, որ գոյութիւն ունեցած է 1920—30-ական թուականներուն:

Հինգերորդ նիստը՝ «Մշակութային երեւոյթներ», որուն դարձեալ կը նախագահէր Յ. Կիւլիւմէտը, րացուցեալ լրագրող Կարապետ Հասապեանի ղեկուցումով՝ «Արժանթինի և Ուրուկուայի հայ գրաւոր մամուլի համապատկեր», ուր մանրամասնօրէն ցուցակագրուած էին երկու երկիրներուն մէջ լոյս տեսած հարիւրական մը հայ թերթեր՝ ծանօթ և անծանօթ, Հիմնարկի յատուկ կոչին իրրուհի հետեւանք, արդէն կարելի եղած է ցուցակագրել Ուրուկուայի 20 հայ թերթեր: Այնուհետեւ, Զաւէն Կենեղեան ներկայացուց Պուէնոս Այրէսի «Գայանէ» պարախումբի 30-ամեայ կեանքն ու գործունէութիւնը՝ 1960-էն սկսած: Երաժիշտ Մուրլէն Կենեղեան խօսեցաւ «Հայ գուտան» մը Հարաւային Ամերիկայի մէջ 50-ական թուականներուն նիւթով՝ անդրադառնալով գուտան Հայոցի բնդուն գործունէութեան Ատլանտեանի երեք հայաշատ զաղութներուն մէջ իրեն ևրաժիշտ, պարուսոյց, խմբավար և բնադրիչ: Նիստին աւարտը կատարեց ճարտարապետուհի Սաբիտ Սեֆէրեանը, որ բաղդատական վերլուծումի ենթարկեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի (Պուէնոս Այրէս) ճարտարապետական կառուցը, իրեն հիմք ունենալով հայկական ճարտարապետութեան բնորոշ գիծերը:

Դադարէն ետք, տեղի ունեցաւ վերջին նիստը («Նոր միտումներ. 80-ական թուականներ»), Վ. Մատթէոսեանի նախագահութեամբ: Առաջին հերթին, իրաւաբան Անա Մարիա Պալան վերլուծեց արժանթինեան այն օրէնսդրութիւնը որ կ'արգիլէ օտար անուններու արձանագրութիւնը և իր կիրառումը հայկական պարագաներու համար, կատարելով ուշագրաւ դիտողութիւններ: Յաջորդաբար, ուրեմն, ելոյթ ունեցաւ փրոֆ. Շաֆէ Էֆիզեան-Գոսքա (Սան Փաւլօ), որ ներկայացուց մանկավարժական այն նախագիծը, որ, Սան Փաւլոյի համալսարանի գործօն և անմիջական մասնակցութեամբ, պիտի կիրարկուի մօտեւ հայրենի աւերած Ստեփանաւան քաղաքի մէջ՝ Հայրենիք-Սփիւռք կապերու գործնական ներգործմը հանդիսանալով: Նիստը փակուեցաւ վարչական գիտութիւններու թեկնածու Յակոբ Կիւլիւմէտի ղեկուցումով՝ «Հայ համայնքի հաստատութիւններու ռազմագիտական ուսումնասիրութեան մը առաջարկ»: Վարչագիտական

մօտեցումներէ մեկնելով, ան վերլուծեց հայկական կազմակերպութիւններու միջոցներու և նպատակներու համակարգը:

Երեկոյան ժամը 20-ին աւարտած նստաշրջանը ինչպէս կը տեսնուի, ընթացաւ նկարագրական և վերլուծական զոյգ մակարդակներով, և առիթ տրուեցաւ ներկաներուն, որպէսզի որոշ զաղափար կազմեն շրջանի համայնքներու խճանկարին մասին:

Կիրակի, 26 նոյեմբերին, նախատեսուած էին երկու կլոր սեղաններ՝ ղեկուցողներու և հրաւիրեալներու փոքր թիւի մը համար: Երկու նիստերը տեղի ունեցան «Ուիլթոն Փալատ» պանդոկին մէջ: Հաստատուած կարգը հետեւեալն էր. սկիզբը խօսք առնողներ եր պատասխանէին կազմակերպիչներու կողմէ ուղղուած հարցումներու, որոնք խթան կը հանդիսանային հետագայ բաց զրոյցին համար:

Առաջին կլոր սեղանը, ժամը 16-էն 18, նիւթ ունէր «Հայ լեզուն զաղութային կեանքէն ներս», նիստը կը վարէր Վ. Մատթէոսեան: Նախապէս ելոյթ ունեցան մանկավարժներ Ռուբէն Մոզեան և Պետրոս Հաճեանը, որոնք կատարեցին կարգ մը հաստատումներ և խտաճանաչումներ (երբեմն՝ վիճակագրութիւններու օժանդակութեամբ) հայախօսութեան վերաբերյալ: Դիտել տրուեցաւ, որ, ներկայ հանգրուանին, երբ լեզուն հետզհետէ կը նահանջէ ամէն գետինի վրայ, կարեւորը անհատը կերտելն է իրեն հայ, որմէ ետք կրնայ անցնի լեզուի որդեգրումին ու կիրառումին:

Դադարէ մը ետք, ժամը 18. 30-էն մինչև 20.30, տեղի ունեցաւ երկրորդ կլոր սեղանը՝ «Հայ զաղութները ապագային» նիւթով: Նիստը վարեց Յ. Կիւլիւմէտը: Աւուրիսի սկիզբը խօսք առին իրավաբան Փափուալ Օճաճեանը, ընկերաբան Պլաթրիս-Պալեան-Բաճեանը, լրագրող Սամօ Սարգիսեան և իրաւաբան Խուան Գարլոս Մերտինեան (Գորտուպա): Տարբեր տեսանկիւններէ մեկնելով, անոնք շեշտը դրին մտաւորական մակարդակի բարձրացման, արտաքին աշխարհի հետ աւելի շեշտուած փոխյարաբերութեան, համագործակցութեան, Եկեղեցւոյ դերի վերաբերում ման, ներքին ժողովրդավարացման և այլ երեւոյթներու վրայ, որոնք կրնան պայմանաւորել ապագան: Բանավիճակին այս բաժնով աւարտեցաւ խիստ հետաքրքրական գիտաժողովը, որուն ընթացքին ներկայացուած ղեկուցումներն ու կլոր սեղաններու ընթացքը հատորի պիտի վերածուին ապագային: Մաղթելի է, որ այս գիտաժողովը այսուհետեւ աւանդական միջոցառում մը դառնայ Հարաւային Ամերիկայի հայ զաղութներուն համար:

ՎԱՐԳԱՆ ՄԱՅՔԷՆՍԵԱՆ

Պուէնոս Այրէս